ԲՈՂՈՔ

ՀԱՐՁԱԿՈՒՄ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՎՐԱ ԵՎ ԹՌՉՆԱԳՐԻՊ

Ո՞ՐՆ Է ԱՎԵԼԻ ՎՏԱՆԳԱՎՈՐ

Գիտությունների ազգային ակադեմիան հատարակական կազմակերպության վերածելու, այսինքն՝ 60-ամյա գիտական օջախը «քանդելու եւ փակելու», համակարգում գործող ինստիտուտները լուծարելու կամ միացնելու եւ վերջապես բարձրագույն որակավորման հանձնաժողովը վերացնելու ՄԱԿ-ի փորձագետների առաջարկները ցնցել են ոչ միայն գիտաշխատողներին, այլեւ գրողներին: Եւ երեկ գրողների միության ղեկավարությունն իր հարկի տակ էր հյուրընկալել ակադեմիկոսներին ու գիտնականներին՝ համատեղ քննարկելու ակադեմիայի ճակատագրի հարցը:

Տեղեկացնենք, որ այսօր ԳՄ եւ ԳԱԱ-ն հանդես կգան համատեղ հայտարարությամբ՝ ընդդեմ ՄԱԿ-ի «գիտության բարեփոխումների պետական ծրագրի»: Եթե մինչ օրս մտավորականները նման «ապազգային» ծրագիր ստորագրել նետելու համար մեղադրում էին միմիայն միջազգային կառույցին եւ նրա փորձագետներին, ապա երեկվա քննարկման ընթացքում մասնակիցների թիրախն ուղղված էր բացառապես կրթության եւ գիտության նախարարությանը՝ ի դեմս Նախարար Սերգո Երիցյանի:

Գրողների եւ գիտնականների համար միանգամայն անհասկանալի էր, թե ինչո՞ւ էր նախարարն իր ստորագրությունը դրել մի փաստաթղթի տակ, որի շնորհիվ, փաստորեն, «ոչնչանում է գիտությունը»: Եւ հենց հավաքի սկզբում էլ նկատվեց նախարարի դեմ ընդվզումը: «ՄԱԿ-ի գործակալները չէին ստեղծել այդ ակադեմիան, որ այսօր հանկարծ մոռանալով գիտնականներին եւ մեր գիտական ունակությունները, հանձնարարեն նման ծրագիր մշակել: Մեր գիտնականների անունները ժողովրդի համար սրբացված են եղել: Այսօր ներքին տագնապ ունեմ: Տեսեք՝ մահմեդականներն այսօր ողջ աշխարհին ստիպեցին ներողություն խնդրել իրենց մարգարեին ծաղրելու համար եւ այսօր չգիտեմ ով պետք է ներողություն խնդրի Հայաստանի գիտնականներից, որոնք ամեն դժվարություններ տարել են...»:

Ամնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն ԲԱԳՐԱՏ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆԻՆ մասնակիցները չթողեցին էլ ելույթն ավարտել: «Նախարարը»,- բղավեցին գրողներն ու գիտնականները: Ավելին՝ պատմաբան ՀԱՅԿ ՂԱՋԱՐՅԱՆԸ ներկաներին կոչ արեց պահանջել, որպեսզի «վտարեն Երիցյանին, պետք է գիտությունը փրկել նախարարից»:



Իրենց զայրույթը չթաքցրին անգամ կտրուկ հայտարարություններին անսովոր ակադեմիկոսները: «Ասում են՝ ՄԱԿ, ինչ ՄԱԿ: Այդ ծրագրի տակ ստորագրել է նախարարը: Ինչո՞ւ բարձր ատյաններում չպետք է լինի գիտությամբ եւ մշակույթով զբաղվող մարդ: Բարոյական անկում է գնում ստեղծված իրավիճակի հետեւանքով: Հանրապետությունը դարձել է բիզնեսի տեղ: Մտավորականությունը կողքի է մղված, անտեսված եւ արհամարհված է: Խիստ միջոցների է պետք դիմել»,- հայտարարեց ակադեմիկոս-քարտուղար ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԸ:

Մյուս ակադեմիկոս-քարտուղարին՝ ԷԴՎԱՐԴ ՂԱՋԱՐՅԱՆԻՆ ոչ այնքան արտաքին, որքան ներքին վտանգն է սարսափեցնում: Ի վերջո, «հայ մարդիկ են այդ գիր մշակողները, այստեղ պարտադրանք չի երեւում»: Եւ ավելացրեց. «Ստալինյան, ցարի ժամանակաշրջաններում ամենաբարձր վարձատրվողը գիտության դոկտորն է եղել, իսկ այսօր նվաստացուցիչ վիճակ է: Մտածված ձեւով գիտնականի վարկի անկում եղավ: Այսօր արժեքային դաշտում կրթական ցենզը, գիտելիքը, գիտությունը արժեք չի ներկայացնում: Նոր արժեքներ կան ձեւավորված մեր հանրապետությունում: Դա որոշվում է նրանով, թե ով ինչ մեքենա ունի, ով ինչ դղյակ ունի: Այ, դրանք արժեք են»:

Վերջինս նաեւ հայտնեց, որ իրենք հաշվարկել են՝ ընդամենը մեկ միլիարդ դրամ է պետք, որ գոնե գիտաշխատողի աշխատավարձը կրկնակի բարձրանա եւ հավասարվի պետական ծառայողի միջին աշխատավարձի չափին: Այսպես շարունակվելու դեպքում. «Ես ձեզ հավատացնում եմ, որ շուտով Հայաստանի գիտությունը ֆիզիկապես է ոչնչանալու՝ բնական ճանապարհով»,- մռայլորեն կանխատեսեց ակադեմիկոսը:

Պատմաբան ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ էլ համոզված է, որ «ոչ մի երկիր չի կարող տուրիզմով զարգանալ, բարեկեցիկ երկիր դառնալ եւ հարեւանների նկատմամբ էլ անհանգստություն չապրել: Միայն գիտությամբ կարելի է այս երկիրը դարձնել բարեկեցիկ եւ ուժեղ երկիր: Այնպես որ խնդիր գիտության, նշանակում է խնդիր հանրապետության եւ նրա ապագային»: Նա առաջարկեց Աժ-ում այս խնդրի շուրջ լսումներ անցկացնել:

Հաջորդ ակադեմիկոսը՝ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՂԱՐԱԳԵՈՉՅԱՆԸ զարմացած ու զայրացած էր. «Մենք, ինչ է, հավաքվել ենք, որ ապացուցենք, թե մեր հանրապետությանը գիտություն պե՞տք է»:

Ալիտա Դոլուխանյանը համոզված է. «Սա ուղղված չէ ակադեմիայի դեմ: Սա ուղղված է հայ մշակույթի գոյության դեմ, որովհետեւ եթե հայերը չունեցան ակադեմիա, ապա չի լինելու նաեւ հայ ժողովուրդ»:

«Ազգային արժեքներից ենք խոսում, բայց կրթությունը տվել են Համաշխարհային բանկին, գիտությունը՝ ՄԱԿ-ին... Ըստ էության, ապազգային գործ ենք անում»,- նկատեց գրականագետ ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆԸ:

Հրապարակախոս, արձակագիր Հրաչյա Մաթեւոսյանը համոզված է, որ պետք է անհապաղ փրկության կոմիտե ստեղծվի. «Չի կարելի դանդաղել: Թռչնագրիպը այնքան վտանգավոր չէ, որքան այս հարձակումը ակադեմիայի վրա»:

ԿԻՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ